

Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը տեղեկատվություն է ներկայացնում 2012 թվականի հունվար-մայիսի (այդ թվում՝ մայիսի) երկրի սոցիալ-տնտեսական վիճակի մասին:

**ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**

2012թ. մայիսի ամսական և 2012թ. հունվար-մայիսի տարեկան արդյունքները բնութագրող հիմնական ցուցանիշները

	Չափի միավոր	2012թ. մայիս	2012թ. մայիսը 2011թ. մայիսի նկատմամբ, %	Մայիսը ապրիլի նկատմամբ, %	2012թ. հունվար-մայիս	2012թ. հունվար-մայիսը 2011թ. հունվար-մայիսի նկատմամբ, %
<b>Տնտեսական ակտիվության ցուցանիշը</b>	%	x	108.0	114.1	x	107.4
Արդյունաբերական արտադրանքի ծավալը	մլն.դրամ	92095.5	114.1	113.4	409520.4	115.0
Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը	մլն.դրամ	46228.4	104.4	132.5	150131.7	103.2
Շինարարության ծավալը	մլն.դրամ	33170.6	87.2	155.6	94534.8	92.0
Առևտրի շրջանառությունը	մլն.դրամ	164914.0	105.1	109.6	699754.2	101.7
Ծառայությունների ծավալը (առանց առևտրի)	մլն.դրամ	77231.2	111.3	104.9	362059.3	110.4
Մպառողական գների ինդեքսը	%	x	100.5	98.7	x	102.5
Էլեկտրաէներգիայի արտադրությունը	մլն.կՎտ.ժ	640.2	98.1	122.5	3395.4	110.1
Միջին ամսական անվանական աշխատավարձը	դրամ	114875	103.8	98.5	114756	104.7
Արտաքին առևտրաշրջանառությունը	մլն.դոլար	488.2	103.1	109.0	2239.5	109.0
	մլրդ.դրամ	193.8	x	x	875.5	x
<i>այդ թվում՝</i>						
արտահանում	մլն.դոլար	122.2	106.9	133.0	561.7	115.2
	մլրդ.դրամ	48.6	x	x	219.6	x
ներմուծում	մլն.դոլար	366.0	101.9	102.9	1677.8	107.1
	մլրդ.դրամ	145.2	x	x	655.9	x

Ծանուցում. 2011 թվականից սկսած հրապարակվում է ամսական «Տնտեսական ակտիվության ցուցանիշը»: Ի տարբերություն «Համախառն ներքին արդյունքի ցուցանիշի», «Տնտեսական ակտիվության ցուցանիշը» հաշվարկվում է ըստ տնտեսական գործունեության տեսակների թողարկման ծավալների, ոչ թե ավելացված արժեքների ծավալների հիման վրա և չի ներառում արտադրանքի զուտ հարկերը և ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայությունները:

Պարզաբանումները ներկայացված են «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2011թ. հունվարին» տեղեկատվական ամսական զեկույցի էջ 8-ում: